

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

7 հուլիսի, 2020 N 37

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով՝ **ո թ ո շ ու մ ե մ**.

1. Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի «Արցախի Հանրապետություն մուտք գործելու առանձնահատուկ և անհետաձգելի համարվող դեպքերը սահմանելու, Արցախի Հանրապետություն մուտք գործելիս և Արցախի Հանրապետության վարչական սահմաններում կիրառվող սահմանափակումների մասին» N 1 որոշման՝

1) 2-րդ և 2.1-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս անցակետում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) թեստի պատասխանը: Թեստի պատասխանն անցակետում չներկայացվելու դեպքում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցները ՊՇՌ հետազոտություն իրականացնելու համար նշված անձանցից իրականացնում են նմուշառում՝ վճարովի հիմունքներով:

Պարտադիր ՊՇՌ թեստավորում անցնելու սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի, ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի համար:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:

2.1. Թեստի պատասխանը բացասական լինելու դեպքում, իսկ թեստի պատասխան չներկայացվելու դեպքում՝ նմուշառում իրականացվելուց հետո, ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցների կողմից կատարվում է զննություն վարակի առկայության կամ վարակի ախտանիշների բացահայտման նպատակով, ինչպես նաև կատարվում է տրանսպորտային միջոց(ներ)ի ախտահանում: Թեստի պատասխանը բացասական լինելու և զննությամբ վարակի ախտանիշներ չհայտնաբերվելու դեպքում բոլոր անձինք ենթակա են ինքնամեկուսացման (բացառությամբ բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և մեկ ուղեկցողի):»:

2) 2.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.3. Անցակետով սույն որոշման 1-ին կետով նախատեսված անձանց՝ Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս ՊՇՌ թեստի պատասխան չներկայացվելու և ՊՇՌ թեստավորման համար նմուշներ հանձնելուց հրաժարվելու, բժշկական զննություն անցնելուց, հոսպիտալացումից, ինքնամեկուսացումից և (կամ) այլ սահմանափակող միջոցառումներից հրաժարվելու դեպքում կարող է սահմանափակվել այդ անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքը որոշակի տարածքի (վայրի) սահմաններում՝ հետազոտման, բուժման և վարակի տարածումը կանխելու նպատակով:»:

3) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված անձինք (բացառությամբ մինչև վեց տարեկան երեխաների) Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելիս անցակետում ԱՀ առողջապահության նախարարության աշխատակիցներին ներկայացնում են իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) թեստի պատասխանը:

Սույն կանոնից բացառություն է արվում բեռնափոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցի վարորդի և ուղեկցողի, գյուղատնտեսական կամ այգեգործական աշխատանքներ իրականացնող անձանց, հոգեհանգստի կամ թաղման արարողությանը մասնակցելու նպատակով՝ հանգուցյալի մերձավոր ազգականների (սույն որոշման իմաստով մերձավոր ազգական են համարվում հանգուցյալի ծնողները, ամուսինը, կինը, երեխաները, քույրը և եղբայրը), ԱՀ պաշտպանության բանակի կարիքներից ելնելով՝ զինված ուժերի անձնակազմի համար:

Սույն կետով սահմանված կարգավորումից բացառություն կարող է արվել միայն Պարետի ցուցումով՝ բացառիկ դեպքերում:».

4) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. ԱՀ ոստիկանության պետին՝ Արցախի Հանրապետություն մուտք գործած անձանց, նրանց մուտքի նպատակի, ինչպես նաև ինքնամեկուսացման մասին ծանուցված անձանց վերաբերյալ ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել Պարետին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 00:01-ին:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ